Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
օգոստոսի 5-ի N 488-Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	իրականացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի դպրոցում արևային ֆոտովոլտային (ON GRID) կայանների տեղադրման աշխատանքները
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26, ՀՎՀՀ՝02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 7,227,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի դպրոց
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թ. օգոստոսի 10-ից մինչև 2019 թ. սեպտեմբերի 6-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2019 թ. օգոստոսի 10-ից մինչև 2019 թ. սեպտեմբերի 6-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի դպրոցում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային (ON GRID) կայաններ: Արժեքը՝ 7,227,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Ֆրիներջի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է արևային ֆոտովոլտային (ON GRID) կայանների տեղադրում՝ 7,227,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ